ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/41-1»

ք. Երևան «08» «հունվարի» 2018 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ.Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ.Ղարիբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի

չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ____ օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, դրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 15357700 (տասնհինգ միլիոն երեք հարյուր հիսունյոթ հազար յոթ հարյուր)ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ 2559616 (երկու միլիոն հինգ հարյուր հիսունինները հազար վեց հարյուր տասնվեց) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի (համաձայնագրի) վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 25 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի

օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրով նախատեսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարությունը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի 1	ք.Երևան, Վարդանանց 110
ՀՎՀՀ 02593108	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
	Հ/Հ 16300-7031509
	ՀՎՀՀ 01548908
Գ.Չթրյան ----------	Տ.Ղարիբյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
«08» «հունվարի» 2018 թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/41-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի								մատակարարման		
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	30197622/387	Թուղթ A4	A4, չկավճապատ էֆկալիպտե թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված: Խտությունը՝ առնվազն 80գ/ք.մ. չափերը՝ 210X297 մմ: Առանց փայտային խեժի և գազանման քլորի պարունակության: Նախատեսված՝ միակողմանի և երկկողմանի տպագրության համար, պիտանի՝ լազերային , թանաքաշիթային և օֆսեթ տպագրության համար: Սպիտակությունը՝ ոչ պակաս 171%-ից (ՍԻ-ԱՅ-Ի համակարգով), ուլտրասպիտակ, պայծառությունը՝ 105%, հաստությունը՝ 108մկմ-ից ոչ պակաս,	տուփ 500 հատ	1800	13534200	7519	Արգիշտիի 1	1880	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									1880	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018

			անթափանցելությունը՝ 94%-ից ոչ պակաս, խորդուբորդությունը (шероховатость) ոչ ավել քան 180մվ/ր, օդի անցանելիությունը՝ 1700մվ/ր, գործարանային փաթեթավորմամբ, յուրաքանչյուր տուփում 500 թերթ, մեկ տուփի քաշը՝ 2.5կգ: Եվրոպական արտադրության, ԻՍՕ 14001, ԻՍՕ 9706, ԻՍՕ 17025, ԻՍՕ 11475, ՕՀՍԱՍ 18001, ՆՈՐԴԻԿ ՓԱՅՆ , ԳՐԻՆ ՍԹԱՐ ՍԻՍԹԵՄ, ԷՖ-ԷՍ-ՍԻ, ՓԻ-Ի-ԷՖ-ՍԻ, Ի-ՍԻ-ԷՖ ստանդարտներին համապատասխան կամ համարժեք, (անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ): Տոքսիկայնություն՝ ոչ ավել քան 95.3%, ֆենոլի պարունակություն՝ ոչ ավել քան 0,001 մգ/մ3, ֆորմալդեգիդի պարունակություն՝ ոչ ավել քան 0,0014 մգ/մ3: Անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ մասնագրերը արտադրողի կողմից հավաստող նամակ-գրություն՝ ուղղված մատակարարի անունով: Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել ապրանքի օրիգինալության հավաստագիր						*1880*	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									1879	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
2	30197232/363	Թղթապանակ արագակար	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար, ստվարաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ3, հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ, ГОUS 17914-72 կամ համարժեք	հատ	49	147000	3000	Արգիշտիի 1	*750*	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									750	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									750	3-րդ եռամսյակ՝

										մինչև 30.09.2018
									750	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
4	30197234/343	Թղթապանակ կոշտ կապերով /ռեգիստրատոր/	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կոնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար, 8սմ հաստությամբ	հատ	545	654000	1200		*300*	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									300	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									300	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									300	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018

8	30197111/314	Կարիչի մետաղալարե կապեր /փոքր/	Գրասենյակային կարիչների մետաղալար կապեր բլոկներով՝ 10մմ/6մմ, «Կանգարո» ֆիրմայի կամ համարժեքը	տու փ 1000 հատ	60	6000	100		*25*	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									25	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									25	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									25	4-րդ եռամսյակ՝ մինչև

										25.12.2018
10	30197340/327	Ապակարիչ	Գրասենյակային ապակարիչ N10, N24, N26 և N26.6 ասեղներով կարված թղթերը քանդելու համար: Նախատեսված է կարիչով կարված թղթերը քանդելու համար, «Կանգարո» ֆիրմայի կամ համարժեքը	հատ	155	3100	20		5	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									5	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									5	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									5	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
11	22816300/301	Նշումների թուղթ- կպչուն-1	Թուղթ նշումների համար, գունավոր կպչուն /76.2x76.2/մմ և /կամ/ /76.2x12.6/մմ չափի տրցակներով	տուփ 100 թերթ	110	66000	600		150	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									150	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									150	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									150	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
12	39263510/307	Սեղմակ - 2	Սեղմակ /կլիպս/ մետաղական, լայնությունը՝ 15 մմ	հատ	9	4500	500		125	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									125	2-րդ

										եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									125	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									125	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
13	39263530/308	Սեղմակ - 3	Սեղմակ /կլիպս/ մետաղական, լայնությունը՝ 51 մմ	հատ	*50*	12000	*240*	Արգիշտիի 1	*60*	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									60	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									60	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									60	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
14	39263520/308	Սեղմակ - 4	Սեղմակ /կլիպս/ մետաղական, լայնությունը՝ 25 մմ	հատ	*16*	19200	*1200*		*300*	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									300	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									300	3-րդ եռամսյակ՝

										մինչև 30.09.2018
									300	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
15	39263510/308	Սեղմակ - 5	Սեղմակ /կլիպս/ մետաղական, լայնությունը՝ 19 մմ	հատ	*11*	13200	*1200*		*300*	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									300	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									300	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									300	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
16	39263410/349	Ամրակ - մետաղյա փոքր	Փոքր, գրասենյակային ամրակներ (սկրեպ) մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33) մմ երկարությամբ: Թղթի դարսը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ:	տուփ 100 հատ	*70*	35000	*500*		*125*	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									125	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									125	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									125	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018

18	39241210/338	Մկրատ գրասենյակայի ն	Գրասենյակային մկրատ ամբողջովին պողպատյա, երկարությունը 18սմ, շեղբի հաստությունը 1.5մմ, բռնակները պոլիմերային ծածկույթով կամ պլաստմասսային:	հատ	*170*	6800	*40*		*10*	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									10	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									10	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									10	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018

20	30192137/317	Մատիտ գրաֆիտե միջուկով	Սովորական, հասարակ, սև գույնի HB կարծրությամբ, ռետինով, /սպիտակ գույնի/	հատ	*20*	10000	*500*		*125*	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									125	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									125	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									125	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
22	30192100/341	Ռետին	/10x15x40/մմ չափի, նախատեսված մատիտի	հատ	*30*	6000	*200*		*50*	1-ին եռամսյակ՝

			գծերը մաքրելու համար							մինչև 31.03.2018
									50	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									50	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									50	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
23	30192121/378	Գրիչ գնդիկավոր	0.5մմ ծայրով, սև, կապույտ, կարմիր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով	հատ	22	22000	1000		250	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									250	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									250	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									250	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
24	30192128/334	Գրիչ գելային	0.5մմ ծայրով, կապույտ, կարմիր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով	հատ	75	37500	500		125	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									125	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018

									125	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									125	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
25	30192720/334	Ընդգծիչ /Գծանշիչ/	Գծանշիչ տարբեր գույների	հատ	105	52500	500		125	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									125	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									125	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									125	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
26	22600000/303	Շտամպի բարձիկի թանաք	Թանաք շտամպի և կնիքի սարքերի բարձիկների համար, առանց յուղի պարունակության, 30մլ. տարողությամբ, կապույտ գույն	հատ	120	1200	10	Արգիշտիի 1	3	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									3	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									2	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018

									2	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
27	39241140/314	Գրասենյակայ ին դանակ	Մետաղյա սայրի լայնությունը 9մմ և /կամ/ 17.5մմ, նախատեսված թուղթ, ստվարաթուղթ կտրելու համար, «Ֆլամինգո» ֆիրմայի կամ համարժեքը	հատ	100	5000	50		13	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									13	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									12	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									12	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
29	30192900/304	Ջնջիչ-2 /վրձինով/	Վրձինով 20մլ, «Լիբրա» ֆիրմայի կամ համարժեքը	հատ	155	31000	200		50	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									50	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									50	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									50	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
30	30199232/309	Ծրար - 1 /A4/	Ծրար՝ A4 (210x297) մմ ձևաչափի, 90%	հատ	28	56000	2000		500	1-ին եռամսյակ՝

			սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 100գ զանգվածով N1 օֆսեթային թղթից ըստ ԳՕՍ 9094-89, ինքնասոսնձվող							մինչև 31.03.2018
									500	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									500	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									500	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
31	30199238/302	Ծրար - 2 /փոքր/	Նամակի ծրար /115x225/մմ չափի խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար /50-ական փաթեթավորմամբ/	հատ	*7.5*	300000	*40000*		*10000*	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									10000	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									10000	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									10000	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018

32	30199233/303	Ծրար- 3 /A3/	A3 ֆորմատի, քաշը՝ 120 գրամ, սպիտակ գույն	հատ	*49*	9800	*200*	Արգիշտ հի 1	*50*	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018

									50	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									50	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									50	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
34	30199000/305	Ծրար – 5 /սկավառակի/	Լազերային սկավառակների համար, պատուհանով, քաշը 80գ/մ² թղթյա.	հատ	19	9500	500		125	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									125	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									125	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									125	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
35	30199230/309	Ծրար - 6 /A5/	A5 ֆորմատի թղթերի համար, քաշը 80գ/մ² թղթյա.	հատ	20	10000	500		125	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									125	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									125	3-րդ եռամսյակ՝

										մինչև 30.09.2018
									125	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
36	22811150/346	Նոթատետր-1	Պարույրով, 80 թերթ, A5 ֆորմատի	հատ	155	23250	150		38	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									38	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									37	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									37	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
37	22811150/347	Նոթատետր-2	Պարույրով, 70 թերթ, A4 ֆորմատի	հատ	300	15000	50		13	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									13	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									12	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									12	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018

38	39292500/315	Քանոն-մետաղական	Ուղիղ քանոն, գծաբաժանումներով, 30սմ երկարության, մետաղյա	հատ	145	7250	50		13	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									13	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									12	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									12	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
41	39263100/305	Լրակազմ	Գրենական պիտույքների սեղանի պտտվող հավաքածու, 23 կտոր	հատ	4000	80000	20		5	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									5	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									5	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									5	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
42	22811180/320	Օրատետր -1 /օրագիր/	2016թ. ամենօրյա գրառումների համար, կոշտ կազմով, չափերը՝ /21.5x15/սմ	հատ	1000	70000	70		18	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018

									18	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									17	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									17	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
44	30197230/361	Թղթապանակ սեղմակով	Մինչև 100 թերթ A4 ֆորմատի թուղթ ամրացնելու համար, պլաստիկ կազմով, սեղմակով, գրպանիկով	հատ	330	13200	40		10	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									10	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									10	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									10	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
45	30192780/304	Էջաբաժանիչ /5 գույն/	Պլաստիկից /45x12/մմ չափի 5 գույնանի	հատ	185	37000	200	Արգիշտիի 1	50	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									50	2-րդ եռամսյակ՝

										մինչև 30.06.2018
									50	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									50	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
46	30193700/306	Թղթադարակ հարկերով	Մետաղական, 3 նիստով, նախատեսված A4 (210 x 297) մմ ձևաչափի թերթերի համար	հատ	2600	26000	10		3	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									3	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									2	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018
									2	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
49	30197331/326	Դակիչ	Դակիչ 25-ից 30 թերթ և A4, A5 ֆորմատի թուղթ դակելու համար, անցքերի տրամագիծը 5.5մմ, միմյանցից հեռավորությունը 80մմ, միջնամասը քանոնով ֆիքսող մետաղական, բռնակը և հենակը պլասմասսե կամ պոլիմերային ծածկույթով: «Maped», «Kangoro» ֆիրմայի կամ համարժեքը	հատ	1150	34500	30		8	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018
									8	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018
									7	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018

									7	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018

* *մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
ՀՎՀՀ 02593108

Գ.Չթրյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908

Տ.Ղարիբյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
20 թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/41-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ ¦§ ¦ 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____ և Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N _ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքն ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 2.1
20 թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/41-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն